ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
գնման ընթացակարգի 54-րդ չափաբաժինը չկայացած հայտարարելու մասին

«ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԳՀԱՊՁԲ-26/2-Վ-2» ծածկագրով գնման ընթացակարգ

Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ենթակայության «Վարդենիսի շուրջօրյա մասնագիտացված խնամքի կենտրոն կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության 2026 թվականի կարիքների համար սննդամթերքի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԳՀԱՊՁԲ-26/2-Վ-2» ծածկագրով գնման ընթացակարգի 54-րդ «Ձուկ թարմ» չափաբաժինը չկայացած հայտարարելու մասին տեղեկատվությունը՝

Информация о признании невыполненными 54-го пайков закупочной процедуры с кодом «ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԳՀԱՊՁԲ-26/2-Վ-2» организованной для закупки продуктов питания для нужд государственной некоммерческой организации "Центр круглосуточного специализированного ухода имени Варденис" при Министерстве труда и социальных дел на 2026 год:

Չափաբաժնի համար	Գնման առարկայի համառոտ նկարագրություն	Գնման ընթացակարգի մասնակիցների անվանումները՝այդպիսիք լինելու դեպքում	Գնման ընթացակարգը չկայացած է հայտարարվել համաձայն՝ "Գնումների մասին" ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի	Գնման ընթացակարգը չկայացած հայտարարելու հիմնավորման վերաբերյալ համառոտ տեղեկատվություն
54-րդ	Իշխան թարմ ձուկ ամբողջական, մեկ ձկան քաշը և ոչ պակաս 750գրամից ոչ ավելի 1.5կգ, փայթեթավորումը պոլիէթիլենային պարկերով, ստվարաթղթե արկղերով: Թարմ իշխան ձուկը պետք է ուղեկցվի անասնաբուժական վկայական ձև N1-ով: Պիտանելիության մնացորդային ժամկետը ոչ պակաս քան 60%: Պատվիրատուի հայացողությամբ պայմանագրի գործողության ողջ ժամանակահատվածում ցանկացած մատակարարված խմբաքանակից փորձանմուշ կարող է մինչև 4 անգամ ուղարկվել փորձաքննության, որը կիրականացվի պատվիրատուի նախընտրած փորձաքննություն իրականացնող կազմակերպության կողմից: Իրականացված փորձաքննության դիմաց վճարումներն իրականացվում են մատակարարի կողմից:	Լայմիս ՍՊԸ	4-րդ կետ	պայմանագիր չի կնքվում

Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության «Վարդենիսի շուրջօրյա մասնագիտացված խնամքի կենտրոն կենտրոն» պետական ոչ առևտրային

կազմակերպության 2026 թվականի կարիքների համար սննդամթերքի ձեռքբերման նպատակով կազմակերպված թիվ «ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԳՀԱՊՁԲ-26/2-Վ-2» ծածկագրով գնման ընթացակարգի 54-րդ «Ձուկ թարմ» չափաբաժնի մասով ընտրված մասնակից է ճանաչվել «Լայմիս» ՍՊԸ-ն, որպես գնման ընթացակարգի պայմանները բավարարող մասնակից:

Համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 35-րդ և 36-րդ հոդվածների՝ 2026 թվականի փետրվարի 2-ին «Լայմիս» ՍՊԸ-ին ներկայացվել է պայմանագրի նախագիծ՝ հաստատելու /ստորագրելու/ և ապահովումների հետ միասին Նախարարություն ներկայացնելու նպատակով: «Լայմիս» ՍՊԸ-ի կողմից սահմանված ժամկետում պայմանագիրը չի ստորագրվել և ապահովումների հետ միասին չի ներկայացվել:

Հիմք ընդունելով Օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասի և վորոնշյալ գնման ընթացակարգերի հրավերների 9.5-րդ կետի պահանջները՝ «Լայմիս» ՍՊԸ-ն զրկվում է պայմանագիրն ստորագրելու իրավունքից /***Եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո սույն օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված ժամկետում չի ստորագրում պայմանագիրը կամ պատվիրատուին չի ներկայացնում պայմանագրի և (կամ) որակավորման ապահովումը, իսկ կնքվելիք պայմանագրով կանխավճար նախատեսված լինելու դեպքում՝ նաև կանխավճարի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրն ստորագրելու իրավունքից***/:

Ընդունվում է որոշում «Լայմիս» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու վերաբերյալ՝ համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «բ» պարբերության պահանջների /***որպես ընտրված մասնակից հրաժարվել կամ զրկվել է պայմանագիր կնքելու իրավունքից***/:

Համաձայն գնման ընթացակարգի հրավերի 8.20 կետի՝ ընտրված մասնակցի կողմից պայմանագիրը չկնքելու (հրաժարվելու) կամ պայմանագիր կնքելու իրավունքից

զրկվելու դեպքում հանձնաժողովի որոշմամբ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ գնման ընթացակարգի 54-րդ «Ձուկ թարմ» չափաբաժինը հայտարարվում է չկայացած և ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը՝ «Եղվարդի նեկտար» ՍՊԸ-ն:

Գնման Պատասխանատու /Գնահատման աշխատակազմի պատասխանատու (ԳՊ/ԳԱՊ)	_____	Խաչատուր Բարսեղյան
Գնման Պատասխանատու /Գնահատման աշխատակազմի պատասխանատու	_____	Սամվել Ասատրյան
Գնման Պատասխանատու /Գնահատման աշխատակազմ	_____	Սմբատ Զարոյան
Գնման Պատասխանատու /Գնահատման աշխատակազմ	_____	Գարեգին Հովսեփյան
Գնման Պատասխանատու /Գնահատման աշխատակազմ	_____	Արման Համբարձումյան
Գնման Պատասխանատու /Մրցույթի համակարգող	_____	Լիանա Մկրտչյան